

Ի՞այց տէրութիւնը տեսնելով որ դուքս ելած ապրանքին մաքսին ծանրութեանը պատճառաւ վաճառականութիւնն երթալով նուազելու վրայ է՝ մաքսը ինչ ջեցուց, որով 1855^{ին} 100,000 կենդինարը անցաւ, և հիմա տարուէ տարի աձելու վրայ է :

Օդաչու ուղևորութիւն Ատլանդ գրնուին:

Դմբիկացիք նշանաւոր եղած են իրենց յանդգնութեամբն ու նորասիրութեամբը օգազու ուղևորութեանց մէջ. գեռ շատ ժամանակ չէ որ աս բանիս նոր հաւաստիք մ' ալ աւելցուցին չորս օդագնաց ուղևորներ, որոնք շատ անգամ աս տեսակ ձամբորդութիւնները ըրած էին ամէն տեսակ վտանգներէ անցնելով :

Դաւնտը լեցուեցաւ Այուրք 1 ուգովիկոս քաղքին մէջ և 60,000 խորանարդ մէգր կազէն աւելի հարկ եղաւ գունտը լեցնելու համար. Դնտին վարի կողմէն քսանըհինդ ուաք հեռաւորութեամբ կախուած էին նաւակները և իւրաքանչիւր նաւակ երկու անիւ ունէր. նաւակներուն և զընտին մէջ տեղը ուրիշ խոշորիէկ նաւակ մը կար, տեսակ մը ուսիի Ճիւղերէ հիւսած, որ պիտի ծառայէր ապաստանելու համար, թէ որ օդապարիկը քամիէն անտառ մը կամ տան մը վրայ իշնար :

Դնցեալ տարի յուլիսի ութիւն, երեկոյեան ժամը վեցուկէսին օդապարիկը սկսաւ բարձրանալ. հետերնին առերէին ամենայն առատութեամբ ամէն տեսակ պաշար, և Ա. 1 ուգովիկոսի օրագրապետներէն մէկը : Պ. Ուայզ այս սովորական խօսքը անէն բաղրայէտ ըսաւ ըսաւ օդապարիկը սկսաւ մէկէն վեր բարձրանալ, և յիսուն հազար ականատեսից ծափահար ցնծութեամբը օղը թնդաց :

() զը գեղեցիկ էր և արևելեան յաջող քամիով սկսաւ օդապարիկն առաջ

երթալ. Երբոր գիշերը վրայ հասաւ, շանապարհորդները սկսան քուն ըլլալ. բայց Պ. Ուայզ որ ընկերով մը գընտին մեջն էր, մեծ վտանգէ մը խալքսեցաւ. որովհետեւ կազին դռնակը բացուելով նաւակին չորս կողմը պատեր էր կազը, որով եթէ ընկերը գիշուածով քունէն շարթըննար, երկուքը մէկէն կը խըղդուեին, ու բոլոր կազն ալ պարպուելով ամէնքը մէկէն վար կը հոսէին : Երկրորդ օրը որ էր շաբաթ՝ օդապարիկը խնտիանայի վրայէն անցաւ: Այն օրը Ծալետոյէն անցնելով ան աստիշան գետնին մօտեցեր էին որ այս խօսքերս սկսան որոշ լսել: “ Իւելի առաջ մի երթաք, մեծ լիձ մը կայ, Լարիէի լիձը կայ . . . : Ի՞այց իրենք աս խորհրդին մոիկ ըննելով սկսան առաջ երթալ լճին վրայէն, և ան միջոցին ժամը 15 մղոն տեղ կը կտրէին : Քիչ ատենէն Լիակարայի ջրվեժին վրայէն անցան, որ իրենց ելած բարձրութենէն տղայական խաղալիք մը կարծես թէ կը տեսնուէր :

Դնանապարհորդներէն երկուքը հարկ էր որ ցամաք ելային ըստ իրենց պայմանագրութեամբ. ուստի սկսաւ օդապարիկը Լոնք-Ռորթի ու Թուէսդըը քաղաքներուն մէջտեղերը վար իջնալ. բայց աս գործողութիւնս կրնար վտանգաւոր՝ ինչուան նաև կորուսիչ ալ ըլլալ, ինչպէս որ եղաւ ալ, բայց առանց կենաց վնաս մը հասնելու . վասն զի ան միջոցին որ երկրիս մօտենալով գետին դպչելու վրայ էին, բուռն մրրիկ մը ելլելով քշեց տարաւ օդապարիկը (Ճնդարիոյ ըսուած լճին վրայ : Ա երահաս էր վտանգը . որովհետեւ օդապարիկը լճին գազանացեալ ալեաց վրայէն ոչինչ բարձրութեամբ կը սաւառնէր անկարգ ընթացքով մը, որով կաման էր որ նորէն պէտք էր վեր բարձրանալ և կամ ալեաց մէջը անյցս կորնչիլ :

Դրդի ինչ որ նաւակներուն մէջը պաշար կար եթէ ուտելիք ըլլայ, եթէ ագանելիք և կամ ուրիշ բան՝ բոլորը լիձը նետեցին, որպէս զի թեթենալով՝ օդապարիկը կարենայ վեր բարձրանալ.

բայց 'ի զուր . վասն զի երթալով վար կ'իջնար , որով հարկ եղաւ նաւակներուն անիւներն , անուորդները ու աթոռներն ալլիճընետելու իրենք չուաններուն պլուելով վերի ապաստանաւանը ելան : Ի՞այց նոյն ատեն նաւակը անանկ ուժով ալեաց զարնուեցաւ , որ մազ մնաց որ ամէնքը մէկէն ծով թափէին . բաղդերնին բանեցաւ և աչանոյն միջոցին նաւակները նորէն շտկուելով իրենց հաւասարակշուութիւնը գրտան , որով օդապարիկը սկսաւ կանոնաւորեալ կերպով առաջ երթալ՝ բայց միշտ ջրին քսուելով՝ ու վայրկենի մէջ երկու մղոն տեղ կը կտրէր , որ խելքէ դուրս արագութիւն բաել է : Ի՞ս միջոցին ցամաքէն շոգենաւ մը ամենայն արագութեամբ սկսաւ դէպ 'ի իրենց մօտենալ որ զիրենք ջրակուլ ըլլալէն կարենայ խալըսել . բայց օդապարիկը շոգենաւին առջևէն կրակի պէս սահելով անցաւ , և աչաքի վրայ գտնուեցաւ օդապարիկը : Ի՞այց հոս ալ ուրիշնորանոր վտանգներու մէջ կը գտնուէին անտառի մը կամ ուրիշ բանի զարնուելով խորտակելու : Ի՞նօգուտ տեղը խարիսխը ձգած կը ջանային օդապար գունտը կեցընել , մինչդեռ քամին փետրոյ մը պէս զիրենք կը քշէր կը տանէր , և վերջապէս անտառախիտ տեղ մը տարաւ ձգեց , ուր որ աչագին ուժգնութեամբ ծառերը տատանելով զիրենք կը սարսափեցընէին . բայց մէյմը որ ծառերուն պլուեցան օդապարիկին չուանները՝ մէկ կողմանէ խարսխին ծանրութիւնը և մէկալ կողմանէ ծառերուն բռնութիւնը վար քաշեցին բոլորովին գունտը և բոլորը մէկէն ծառերուն ձիւղերէն կախուեցան մնացին :

Դունտը պատառ պատառ եղաւ . կազն ալ աչագին ձայթմամբ օգուն մէջը ցրուեցաւ , ու մեր օդաչու ձանապարհորդներն ալ բարձր կաղամախի մը ծառին վրայ կախուած մնացին , գետնէն երեսուն ոսք բարձրութեամբ , առանց գիտնալու թէ ետքերնին ուր պիտի երթայ : Երբոր առաջին աչա-

թեկութիւննին անցաւ՝ ուզեցին կամաց կամաց ծառէն վար իջնալ , որն որ առանց վնասու մը կատարուեցաւ , և միայն մէջերնէն մէկը ծառէն վար իջնալու ատեն ամենաթեթև կերպով մը վնասուեցաւ :

Ո՞էկէն մերձակայ տեղերուն քնակիչները մեծաւ ուրախութեամբ եկան զիրենք ընդունելու , և հանդիսով մօտիկ աւանը տարին : || . | ուզովիկոսէն ելլենէն ինչուան հոն վար իջնալնին տասնըութը կէս ժամ տեսեր էր , և այսչափ ատենուան մէջ 1,150 մղոն տեղ քալեր էին : Ը ոգեկառք մը այսափ տեղ քալելու համար երեսունըութը ժամ պէտք է որ գնէ : Ի՞յս եղած փորձով կ'ուզեն հաստատել օդագնաց ձանապարհորդները , թէ երկուսուկէս օր բաւական է Ովկիանոսը անցնելու համար յաջող քամիով :

Սրտին ցաշէն հիշանդացաճ ձի մը :

Յայտնի ու ծանօթ է ամենուն ձիոց կարգէ դուրս ունեցած զգայականութիւնը եթէ իրենց տիրոջը վրայ ըլլայ , և եթէ իրենց ընկերներուն նկատմամբ՝ որոնց հետ որ ընկերակցութեամբ երկայն ատեն կեցած ըլլան : Իսածներնուս հաւաստիք ու միանգամայն զարմանալի օրինակ մը կրնայ սեպուիլ այս հետեւալ դէպքս , որ մօտերս Ի՞արիզու մէջ հանդիպեցաւ :

Ձիավաճառ մը Դամի տօնավաճառէն մատակ ձի մը գնելով ուրիշ ընկերով մը || . Դիերմանոս բերաւ , ու հոն ուրիշ մը ծախեց մատակ ձին իր ընկերոջին բաժնելով : Ի՞ս ձին ընկերոջմէն բաժնուելու ատեն մեծ դժուարութից ցրցուց , և երկայն ատեն ետին դարձած ուշադրութեամբ անոր վրայ կը նայէր մինչեւ որ ացքէն բոլորովին անհետացաւ : || . Դիերմանոսի ձամբուն ամբողջ երկայնութեանը միջոց՝ գնողը ուրիշ մասնաւոր այլայլսութեան նշան մը չտեսաւ ձիուն կերպին կամ քալե-